ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«29» 12 2020թ. № 02/06.1/7560-20

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր՝ 22.12.2020թ. հարցման

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ձեր կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում եմ, որ, համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայությունում առկա տեղեկատվության, Արարատի մարզում գործում է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ պոչամբարը (Արարատի ոսկու կորզման կոմբինատ), որի նախագծային ծավալը կազմում է 30 մլն մ^3:

Ս.թ. նոյեմբերի 1-ի դրությամբ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ պոչամբարի փաստացի ծավալը կազմում է 20 մլն մ^3, որտեղ առկա են՝ սնդիկ, արսեն, կադմիում, մոլիբդեն, պղինձ, վանադիում, կապար, անագ, ցինկ, մանգան, քրոմ քիմիական նյութերի տարբեր քանակություններ:

Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի ղեկավարության կողմից ԱԻՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչությանը տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչամբարը դեկտեմբերի 1-ի դրությամբ պարունակում է 11,45 մլն մ^3 պոչանք, որից 70-80%-ը հեղուկ վիճակում է, և քանի որ գործում է փակ շրջանառու ջրամատակարարման համակարգ, այն հետ է վերադարձվում ֆաբրիկա:

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 12) 31 77 28, Էլ.փոստ՝ mes@mes.am

Պոչամբարը պատված է կավի արտաքին շերտով, ունի արտաքին և ներքին դրենաժային համակարգեր: Լեռնամետալուրգիայի ինստիտուտի կողմից կատարվուում է ստորգետնյա ջրերի ամենամսյա մշտադիտարկում՝ հատուկ սարքերի միջոցով, արդյունքները տրամադրվում են Շրջակա միջավայրի նախարարությանը:

«Հայկական բնապահպանական ճակատ» նախաձեռնության ահազանգի հետքերով 2020 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում ստուգումներ են իրականացվել ոստիկանության և բնապահպանության տեսչական մարմնի համատեղ հանձնաժողովի կողմից: Տեղազննվել է պոչամբարի տարածքը, լսվել են մի շարք աշխատակիցներ, կազմվել են համապատասխան նյութեր, որոնց արդյունքում ընդունվել է մերժման որոշում՝ նշված փաստն իրականությանը չհամապատասխանելու հիմքով:

Հայտնում եմ նաև, որ Ձեր կողմից բարձրացված հարցերը՝ Արարատի ցիանային պոչամբարի վերաբերյալ, դուրս են Արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթների շրջանակներից:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում եմ նշված հարցերի պատասխանները ստանալու համար դիմել տվյալ պոչամբարը շահագործող կազմակերպությանը, Շրջակա միջավայրի նախարարությանը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, ինչպես նաև ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին:

12/25/2020

X

ՎԱՀԱԳՆ ՕՀԱՆՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: OHANYAN VAHAGN 2002810192

ՎԱՀԱԳՆ ՕՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 12) 31 77 28, Էլ.փոստ՝ mes@mes.am

Նազելի Էլբակյան, հեռ.՝ 012/31 77 20